

Վեղի քաղաքի թիվ 2 մանկապարտեզի

տնօրեն Ս. Մանջոյանի

01.03 – 21.12.2018թ. կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մանկապարտեզի գործունեության առարկան և նպատակար ն/դ կրթական քնույթի գործունեության իրականացումն է:

Ն/դ ուսումնական հաստատության ղեկավարումն իրականացվում է կանոնադրության և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Մանկապարտեզի կոլեկտիվի աշխատանքն իրականացվում է մանկապարտեզի աշխատանքային պլանին համապատասխան: Պլանի յուրաքանչյուր բաժին պարունակում է այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են ն/դ հաստատության աշխատանքների բարելավմանը:

2018թ. մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 2 1-ը ընկած ժամանակահատվածում մանկապարտեզի բոլոր տարիքային խմբերում անցկացվել է հետևյալ միջոցառումները՝

1. Մարտ “Ծաղկազարդ” նվիրված գարնան զարթոնքին:
2. Ապրիլ՝ գարնան և վերածննդի խորհրդանիշ, Զատիկի տոն, մայրության և գեղեցկության տոն:
3. Մայիս 28 – ՀՀ ստեղծման օր:
4. Հունիսի 1 – երեխաների պաշտպանության միջազգային օր:
5. Հունիսի վերջին և հուլիսի սկզբին միջոցառումներ նվիրված տարեվերջին և սաների դպրոց ճանապարհելուն:
6. Սեպտեմբերի 1 – դպրության և գիտելիքի օր:
7. Սեպտեմբերի 21 - ՀՀ անկախության հռչակման օր:
8. Նոյեմբեր - “Ոսկե աշուն”:

Դեկտեմբերին նախատեսված է “Ամանոր” - ին նվիրված միջոցառում:

Հունիս ամսին ավագ խմբի երեխաները մասնակցել են մարզային սպորտլանդիային և մրցույթի 3-րդ փուլում 2-րդ տեղը գրավելու համար արժանացել՝ 110000 դրամական պարգևի ,որով գնվել է գույք:

Ստացել ենք գույք նաև ՈԻՎԿ ՓԲԸ-ի կողմից և “Մոցիալական աշխատանք ընտանիքների հետ” կազմակերպությունից:

Մանկապարտեզի ֆինանսավորումը իրականացվում է Վեդու  
քաղաքյին համայնքի բյուջեից:

2018թ. մանկապարտեզի ընդհանուր բյուջեն կազմում է՝  
24000000դրամ ,  
որից ծնող միջոց 6000000դրամ

Մինչև 2018թ. դեկտեմբերի 1 – ի դրությամբ ֆինանսավորումը  
կազմել է 16221500 դրամ և

Ծնողական վճար 60636000դրամ դեկտեմբերը ներառյալ  
Ծախսերը կազմել են՝

Աշխատավարձ 17433748դրամ

Տնտեսական միջոցների ձեռք բերում 353160դրամ

Սննդամթերք 5550000դրամ

Էլեկտրոններգիա 220000դրամ

Կապ ,ինտերնետ 115280դրամ

Գազ 211000 դրամ

Գազի սպասարկում 47822դրամ

Ջուր 165100 դրամ `նոյեմբերը ներառյալ

Աղբ 40000

Դեռատիզացիա 30000դրամ

Դեղորայք 20000դրամ

Համայնքի ֆինանսավորմամբ մանկապարտեզում կատարվել են  
շինարարական աշխատանքներ, վերանորոգվել է խմբասենյակներ և  
տրամադրվել է հոգեբանամանկավարժական հասարակական  
կազմակերպությանը:

Աշխատանքի գինը և վարձատրությունը կազմել է 737.620 դրամ

Վերականգնվել են գործող խմբասենյակների պատուհանների  
ապակիները: Աշխատանքի գինը կազմել է 130.000 դրամ:

Ամանորին երեխաներին տոպրակներ գնելու համար նախատեսված է  
126.000դրամ:

Դահլիճի և հարակից սենյակի հին պատուհանները փոխարինվել են եվրո պատուհաններով:

2018թվականի մարտ ամսից մինչև սեպտեմբեր՝ երեխաների ցուցակային թիվը եղել է 190 երեխա, միջին հաճախումը՝ 130:

Սեպտեմբեր ամսին դպրոց են գնացել 53 երեխա:

2018-19 ուս.տարով պայմանավորված երեխաների ցուցակային թիվը եղել է 175 երեխա՝ միջին հաճախումը 130: Մանկի միջին ծախսը մեկ երեխայի համար կազմել է՝ 235 -240 դրամ:

Մանկապարտեզում անցկացվել են մանկավարժական խորհրդակցություններ, մեթոդ ժամեր՝ ըստ ուսումնական պլանի:

Խմբերում անցկացվել են բաց և թեմատիկ պարապմունքներ:

Անցկացվել են խմբակային և ընդհանուր ծնողական ժողովներ:

Կատարվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկողություն ըստ ժամանակացույցի՝ օպերատիվ, թեմատիկ, հանրագումարային:

Մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը ունի ամսական վերահսկվող, եռամսյակյա մեկ և պարբերաբար վերահսկողություն պահանջող հարցեր:

Այդ հարցերն են

1. Երեխաների կյանքի և առողջության պահպանում:
2. Ուսումնադաստիարակչական գործընթացը, երեխաների գիտելիքների, կարողությունների մակարդակը:
3. Օրվա ռեժիմում առողջարարական միջոցառումների անցկացումը:
4. Մանկի կազմակերպումը:
5. Մանկի նորմերի վերլուծություն:
6. Երեխաների հաճախումը:
7. Եռամսյակային ծրագրի կատարման վերլուծություն:
8. Ըստ խմբերի՝ փաստաթղթերի վարման վերլուծություն:
9. Օրվա ռեժիմի իրականացումը:

10. Սանհիտարահիգիենիկ նորմերի վիճակը:

11. Կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանում:

12. Ծնողների հետ տարվող աշխատանքների համակարգը:

13. Ներքին աշխատակարգի կանոնների պահպանում և այլն:

Ճաշացուցակը կազմվում է ըստ փուլերի նախաճաշ, ճաշ, ետճաշիկ, ստորագրվում, կնիքվում և փակցվում է ծնողների համար տեսանելի տեղում:

Աշխատում ենք ապահովել կալորիականությունը:

Շատ կարևորում ենք առավոտյան մարմնամարզությունը և հետևում ենք երեխաների շարժողական ակտիվությանը և տրամադրությանը:

Ըստ պլանի մանկապարտեզում ուսուցանվում է խոսքի զարգացում, գրաճանաչություն, էկոլոգիա, մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացում, նկարչություն, ծեփ, ապլիկացիա, կառուցողական աշխատանք, երաժշտություն և ֆիզկուլտուրա:

Մանկավարժական անձնակազմով անցկացրել ենք մեթոդ ժամեր, սեմինարներ: Մշակել ենք օրինակելի պարապմունքների նմուշօրինակներ, մայրենի լեզվի, մաթեմաթիկայի և էկոդաստիարակության ուղղությամբ: Ամենօրյա աշխատանք է տարվում աշխատակիցների հետ, աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերով՝ անհատական և խմբային:

Կոլեկտիվում պահպանում ենք բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ:

Կան դժվար դաստիարակվող երեխաներ, որոնց հետ տարվում են լրացուցիչ աշխատանքներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

01.01.2018թ-21.12.2018թ

/Վեդի քաղաքի թիվ3 մանկապարտեզ/ՀՈԱԿ-ի ֆինանսավորումը իրականացվում է Վեդու քաղաքային համայնքի բյուջեից :

2018թ.մ/գ-ի ընդհանուր բյուջեն կազմում է	23.500.0 դրամ
1 երեխայի հաշվով ծախսը կազմում է	23.0դրամ
Քաղաքապետարանը	18.000.0դրամ
Ծնողական միջոցներ	5.0դրամ
Արդ-ը 12.2018թ. դրությամբ ֆինանսավորումը կազմել է	24.830.000դրամ
Ծնողական միջոցներ	6.001.8դրամ /6.930.600դ.
Աշխատավարձ	16.120.1դրամ /17.547.400դ
Տնտեսական	246.9դրամ
Սննդամթերք	5.122.819դրամ, որից պարտք, 727.680 դրամ /5.533.000դ./162.100դ.
Էլեկտրոններգիա	127.9դրամ
Կապ	97.0դրամ
Գազ	160.4դրամ
Գազի սպասարկում	57.4դրամ
Ջուր	122.4դրամ
Ադր	40.000դրամ
Անվճար երեխաների թիվը	9 երեխա
Ցուցակային	194 երեխա
2013թ ծնված երեխաների թիվը	52 երեխա